AWHHE

Առաջարկվող պրակտիկաներ

Առաջարկվող հետևյալ պրակտիկաները Հայաստանի բուժհիմնարկներում գոյացող բժշկական թափոնների կառավարման և տնօրինման գործում կիրառելու համար են:

1. Թափոնների կառավարման հարցերում պատասխանատուի նշանակում
Յուրաքանչյուր բուժհիմնարկի ներսում որևէ անհատի պետք է դարձնել բժշկական թափոնների կառավարման վերահսկման պատասխանատու: Այդ անձնավորությունը կարող է խորհուրդներ ստանալ համաճարակաբանից, հիվանդանոցի ղեկավարից (ադմինիստրատոր) կամ գլխավոր բուժքրոջից:

2. Նախնական ուսուցում
Անհրաժեշտ կլինի նախաձեռնել ուսուցման ծրագիր, որը տեղեկություններ տրամադրի բժշկական թափոնների դասակարգման, փաթեթավորման պատշաճ մեթոդների, դրանց հետ վերաբերվելու կերպերի և հարկ եղած ձևով տնօրինման վերաբերյալ:

3. Հիմնական դասակարգում և առանձնացնում
Բժշկական թափոնները պետք է նախ հստակորեն և ուշադրությամբ սահմանվեն և լավ ընբռնվեն: Գոյություն ունեն բժշկական թափոնների չորս դասակարգումներ, որոնք Հայաստանի համար անմիջական մտահոգություն են ներկայացնում: